ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(2012 թ. օգոստոս)

2012 թ. օգոստոս ամսին Արագածոտն թեմի առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի հրավերով պեղումներ եմ իրականացրել Օշական գյուղի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու զանգակատան հիմքի տարածքում: Եկեղեցու ներսում կատարվող մասնակի վերանորոգման աշխատանքների ընթացքում Սրբի տապանաքարի արեւելյան պատի խորշի մեջ ագուցված խաչքարը տեղաշարժելու ժամանակ նկատվել է, որ վերջինիս հետեւի արեւելյան պատը շարված է մի քանի քարե սալիկներով, որոնցից մեկը տեղաշարժված է: Շինարարներն այն հանել են՝ նորից տեղում ամրացնելու նպատակով: Սակայն պարզվել է, որ սալաքարի հետեւի տարածքը, որը ավագ խորանի հատակն է եւ զանգակատան հիմքը, լցված է տուֆ քարի բեկորներով եւ երկու զանգվածեղ բազալտե քարով, սվաղի կտորներով: Անհասկանալի պատկերը հստակեցնելու նպատակով ձեռնարկվեցին հնագիտական պեղումներ:

Անհրաժեշտ եղավ զանգակատան կիսակոր մակերեսը շերտագրական հորիզոններով մաքրել եւ հեռացնել շինարարական թափոնը: 2.83 մ բարձրությամբ աղբակույտը հանելու ընթացքում 3.15 x 2.54 քմ տարածության վրա հերթականությամբ բացվեցին սեւ տուֆով շարված գետնախարիսխներ (թվով 3՝ 2.3 մ, 2.7 մ եւ 3.53 մ երկարությամբ, 35-36 սմ լայնքով, 25-26 սմ բարձրությամբ): Բոլոր աստիճանների հյուսիսային եւ հարավային կողմերը հիմք են ծառայել զանգակատան հիմնապատերի համար: Հնարավոր չեղավ աստիճաններն իրենց նախնական չափերով բացելու: Զանգակատան հյուսիսային պատը շարված է 5 շարք տուֆ քարով, որոնց մեջ առանձնանում են հին եւ նոր մշակվածները՝ կապակցված կրաշաղախով:

Հարավային պատը չմշակված խոշոր տուֆ քարով է շարված: Սվաղով պատած է եղել շինարարական թափոնը, խոշոր քարերը եւ եռաստիճանները:

Նույն սվաղը 45 սմ խորությամբ պահպանվել է զանգակատան հիմքի շարվածքի մեջ: Զանգակատան հատակը բնական տուֆ քար է՝ վրան սվաղի հետքերով: Նույն տեղում հայտնաբերվել են կավե անոթների մի քանի բեկորներ, կենդանիների ոսկորներ:

Տեղում բացված հնագիտական մասունքների հայտնաբերումը եւ լուսաբանումը պարտադրում է մեկ անգամ եւս անդրադառնալ Ս. Մաշտոց եկեղեցու հետ կապված գրավոր տեղեկություններին:

Ե. դարի պատմիչ Կորյունը, որ Մաշտոցի աշակերտն էր, նախապես գրում է, որ ինքը ականատես է եղել եւ բոլոր տեղեկությունները քաղել է նշանավոր գիտակ անձերից: Այդ առումով եզակի են Մաշտոցի մահվան եւ թաղման արարողության հետ կապված մանրամասները, որոնք Ե. դարից ի վեր չնչին բացառություններով կրկնել են պատմիչներն ու մյուս հեղինակները: Կորյունը սիրով, ակնածանքով, շատ պատկերավոր ներկայացնում է. «...Հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով վախճանվում է Երանելին: Մեծ Հայաստանի հազարապետ Վահան Ամատունին եւ Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակ Մամիկոնյանը աշխարհական բազմության հետ վերցրին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով, օրհնությամբ եւ հոգեւոր ցնծություններով, վառած կանթեղներով եւ բորբոքված ջահերով, բուրող խնկերով եւ ամբողջ լուսաճաճանչ աշտանակով եւ այն լուսավոր առաջախաղաց խաչանշանով բարձրացան Օշական եւ այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրհնավոր հիշատակը կատարեցին, ապա նշանը աներեւույթ եղավ, եւ նրանք վերադարձան յուրաքանչյուրն իր տեղը:

Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց Քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տաշած, քանդակած քարերով եւ տաճարի ներսում շինել Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենարար մարմնի եւ արյան սեղանի համար վայելուչ, գույնզգուն ոսկով եւ արծաթով թանկագին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, եւ մի տեղ հավաքված բոլոր Սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը եւ նրա Թադիկ անունով աշակերտին, մի զգաստ եւ բարեպաշտ մարդու, եղբայրների (հոգեւոր) հետ երանության հասած Սրբի (Մաշտոցի) համար սպասավոր կարգեցին ի փառս Աստծո»[1]:

Նույն Ե. դարի պատմիչ Ղազար Փարպեցին հակիրճ ներկայացնում է միայն Մաշտոցի թաղման վայրը՝ ավելացնելով. «...եւ յոյժ մեծարանօք զդիր երանելւոյն կազմեալ՝ տօն յիշատակի առնեն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոցն Այրարատոյ»[2]:

1 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երեւան, 1979, էջ 51:

2 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 77-78:

Մովսես Խորենացին ուշադրությունը կենտրոնացնում է Մեսրոպ Մաշտոց անձին՝ բարյացակամ, բարեմիտ, երկնային առաքինություններով զարդարված, բեղմնավոր մտքով, փառահեղ մարմնով, հավատով ուղիղ, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ, հույսով համբերատար: Հուղարկավորության պատմությունը ավելի քան զուսպ է. Վահան Ամատունին մարմինը վերցրեց եւ արժանավայել հուղարկավորությամբ տարավ Օշական: Եւ նույն լուսեղեն խաչի ուղեկցությամբ, Վահանը եւ սպասավոր Թադիկը հողին հանձնեցին Երանելի Մեսրոպին, որից հետո նշանն աներեւույթ եղավ[3]:

Թ. դարի պատմիչ Թովմա Արծրունին, չմտնելով մանրամասների մեջ, գրում է. «Սուրբ Սահակի մահվանից վեց ամիս անց նույն տարում վախճանվեց նաեւ Սուրբ Մաշտոց: Հայոց նախարարների բազմությունը Վահան Ամատունու ղեկավարությամբ, որ այն ժամանակ հայոց սպարապետն էր, խաչի նման լույսի «ուղեկցությամբ» տարան եւ թաղեցին Արագածոտն կոչված գավառի Օշական գյուղում»[4]:

Ուշ միջնադարի պատմագիր Առաքել Դավրիժեցին, անդրադառնալով Փիլիպոս Կաթողիկոսի կատարած բազմաթիվ շինարարական աշխատանքներին եւ Օշականի տաճար-հանգստարանին, գրում է. «Աստծու փառքի հոյակապ լայնանիստ բարձրաբերձ տաճար-հանգստարանի ողջ տանիքը փլվել, նստել էր, միայն ավագ խորանն էր մնացել ծածուկ: Եւ Սուրբ Հայրապետ Փիլիպոսն իր կաթողիկոսության ժամանակներում սկսեց եւս նորոգել, որ եւ արեց մեծ ծախսերով եւ աշխատանքով, մշակված քարով, մածուկ կրով, մինչեւ ամբողջը ավարտեց մեր թվականի 1094 [1645] ի փառս Աստծո»[5]:

Ըստ Հովհաննես Շախաթունյանցի՝ Փիլիպոս Կաթողիկոսի վերաշինած եկեղեցին անսյուն է եղել, իսկ արեւելյան կողմից ավարտվել է ավագ խորանով եւ երկու կողմերի ավանդատներով[6]: Նա տեղում կարդացել է շատ արձանագրություններ: Ի մի բերելով եղած պատմական բոլոր վկայությունները՝ Ալիշանը անդրադարձել է Շախաթունյանցի հրատակարած՝ եկեղեցու հարավային որմի վրա տեղադրված, թվագրություն չունեցող մի արձանագրության, հարցականի տակ դնելով Յոհան անունը. «Ես իշխան Յոհան Ամատունի յազգէն հայոց եդի սահման գաւառիս իմոյ յՕշականայ հասանի մինչ ի բլուրն, Էջմիածնի, եւ անտի վայր.

Ի միջոցս Օշականայ եւ Էջմիածնի՝ ի բացս... մինչ ի Քասախ (գետ). հիւսիսոյն կուսէ գետն Փարպու մինչ ի քսոսպն համակ պողոտայն, եւ անտի վեր Կարբու դարերն (ստորոտու առապարացն). յարեւելից կուսէ ճանապարհն

3 **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Երեւան, 1968, էջ 314-315:

4 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1978, էջ 94-95:

5 **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Երեւան, 1988, էջ 276:

6 Տե՛ս **Յովհաննէս Շախաթունեանց**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հտ. Բ., Ս. Էջմիածին, 1842, էջ 76:

Զանգակատան բնական տուֆ
քարե հատակը

Զանգակատան հարավային պատի
շարվածքը՝ չմշակված քարերով

Զանգակատան հիմքի շարվածքի մեջ
պահպանված սվաղի շերտը

Զանգակատան հիմքում
բացված գետնախարիսխները

Զանգակատան հյուսիսային պատի
տուֆե շարվածքը

Մեսրոպավանի Ս. Գրիգոր կամ
Մեսրոպ Մաշտոց վանքի եկեղեցին Ի.դ. վերջերին



Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու
դամբարանի հատակագիծ (ճարտարապետ՝ Մերի Դանիելյան)

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին
Օշականում

Տեղում հայտնաբերված խեցեղեն
անոթների բեկորներ և
կենդանու ոսկորներ

եղէ վարդայ աստի մինչ ի Էջմիածին. ով ոք այս ցանկս պատառէ, սեւերես լինի առաջի Աստուծոյ, ամէն»[7]:

Միքայել Չամչյանը անդրադառնում է Մաշտոցի թաղման վայրի հետ կապված խառնաշփոթ աղմուկին, այն է՝ Սրբին թաղել Տարոնո՞ւմ, Վաղարշապատո՞ւմ, թե՞ Գողթնում: Վահան Ամատունին Մաշտոցին մեծ շուքով թաղում է Օշականում եւ երեք տարի հետո նույն տեղում կառուցում է խորան՝ ահեղ եւ սքանչելի[8]: Չամչյանը հիշեցնում է նաեւ, որ Գողթնը այն գավառն է, որտեղ երանելին նախապես քարոզել եւ լուսավորել էր շատերին: Մեսրոպ Մաշտոցը Գողթնում կառուցել է նաեւ եկեղեցի: Ըստ ավանդության՝ եկեղեցին կառուցել է իշխան Շաբիթը 456 թ.: Հիշյալ նշանավոր հուշարձանը սկզբում կոչվել է Ս. Գրիգոր, հետագայում վերանվանվել է Մեսրոպավանք: Այն փոքր ծավալի, արեւելք-արեւմուտք ձգված ուղղանկյուն հատակագծով քառամույթ գմբեթակիր հուշարձան է: Ըստ վանքի վիմագիր արձանագրությունների՝ եկեղեցին վերանորոգվել է ԺԵ., ԺԷ., ԺԹ. դարերում: 1989 թ. ազգամիջյան իրադարձությունների պատճառով արտաքսվել են վերջին հայ ընտանիքները եւս[9]:

Երախտարժան հոգեւորական եւ մեծ գիտնական Մաղաքիա Օրմանյանը, ի մի հավաքելով եղած գրավոր աղբյուրները, սույն դեպքերը ամփոփում է այսպես. Վահան Ամատունին Մեսրոպի մարմինը տանում է Օշական գյուղը, «հոն հանգոյց զայն պատշաճաւոր հանգստարանի մէջ, որուն վրայ Վահան եկեղեցի մըն ալ շինեց երեք ամիս ետքը, որ յետոյ գիւղին եկեղեցին եղաւ», - ապա ավելացնում է, - «եւ վերջին ատեններ Գէորգ Դ. կաթողիկոսի ձեռօք փառաւոր կերպով վերաշինուեցաւ: Այս եկեղեցւոյն բեմին ներքեւ, գետնափոր մատուռին մէջտեղը կը տեսնուի Մեսրոպի գերեզմանը, որ պէտք է բոլոր այբուբէնի աշակերտներուն նուիրական ուխտատեղին ըլլար»[10]:

Թորոս Թորամանյանը տեսել եւ նկարագրել է Օշականի եկեղեցին. «Վահան Ամատունին՝ ի յարգանս Մեսրոպ Մաշտոցի յիշատակին, որ ստեղծեց հայոց գիրը եւ համահայաստանեան երախտագիտութեան արժանացաւ, հանգուցելոյն մարմինը տարաւ իւր սեփական կոչուած Օշական գիւղը եւ ամփոփեց մի ստորերկրեայ դամբարանի մէջ, վրան մի մեծ եկեղեցի շինեց, որ այսօր չկայ: Նախկին եկեղեցին չափազանց հնացած է եղել, որը Փիլիպոս Կաթողիկոս 1840 թ. նորոգել է, բայց դարձեալ չի դիմացել» (խոսքն այստեղ վերաբերում է 1645 թ., այլ ոչ թե բնագրում թույլ տրված՝ 1840 թ. վրիպակին): Ամենայն հավանականությամբ 1645 թ. վերականգնված սույն եկեղե-

7 **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1890, էջ 190-191:

8 Տե՛ս **Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն, հտ. Ա., Երեւան, 1985, էջ 534:

9 Տե՛ս **Արգամ Այվազյան**, Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը, Գողթն գավառ, հտ. Գ., Երեւան, 2007, էջ 39-40:

10 **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա., Ս. Էջմիածին, էջ 369-370. տե՛ս նաեւ «Սոփերք Հայկականք», Վենետիկ, 1853, ԺԲ., էջ 33:

ցին քանդվել է 1679 թ. երկրաշարժի հետեւանքով: Թ. Թորամանյանը շարունակում է. «Վահան Ամատունու շինած եկեղեցին քանդուած է, հին հիմերի վրայ, բացի արեւելեան կողմի մի մասնաւոր մնացորդ է, վերաշինել է Գէորգ Դ. Կաթողիկոսը՝ պահելով իր տեղում Մեսրոպ Մաշտոցի ստորերկրեայ դամբարանը՝ եկեղեցիի տակ... Այս եկեղեցին ալ, 5-րդ դարու ուրիշ եկեղեցիներու նման, ունեցել է արեւելեան կողմէն դէպի հիւսիս եւ հարաւ դուրս ցցված թեւեր, որոնց հիմերը մինչեւ այժմ կերեւին հողին երեսին: Գէորգ Կաթողիկոս ավելորդ համարելով այդ մասերը վերաշինել, իսպառ քանդել է: Այս տիպի եկեղեցիներ են՝ Տեկոր, Երերոյք, Օձուն, Արթիկ»[11]:

Վարազդատ Հարությունյանը, հավանական համարելով սույն տեսակետը, այնուհանդերձ երկմտում է, թե ինչ հորինվածքի է եղել եկեղեցին, նաեւ չբացահայտված է համարում Կորյունի՝ եկեղեցու շատ խորաններ ունենալու մասին հիշատակությունը (նշենք սակայն, որ պատմիչը նշում է միայն «տաճարի գերեզման» արտահայտությունը)[12]:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցուն է անդրադառնում նաեւ ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը: Վկայակոչելով Առաքել Դավրիժեցուն՝ նա շարունակում է. «1873-1879 թթ. Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսը օշականցիների մասնակցությամբ տեղում նոր եկեղեցի է կառուցել՝ թաղածածկ դահլիճի հորինվածքով, ձվաձեւ ավագ խորանի երկու կողմերում ավանդատներով: Խորանի տակ 443 թ. կառուցված դամբարանն է, որն ուղղանկյուն թաղածածկ խուց է, արեւելքում խորշով, հյուսիսից եւ հարավից մուտքերով: Մինչեւ Ի. դարը դեռեւս պահպանված են եղել նախկին շենքի պատերի հետքերը՝ արեւելքում արտաքուստ բազմանիստ Ավագ խորանով: 1884 թ. եկեղեցուն արեւելքից կցել են երկհարկ, ութասյուն ռոտոնդայով պսակված զանգակատուն, որը բացառիկ է հայ ճարտարապետության մեջ՝ տեղադրությամբ, գլանաձեւ ծավալով եւ ավագ խորանից բաց մուտքով: 1960-1964 թթ. նորոգվել են եկեղեցին եւ դամբարանը, դամբարանի խորշում խաչքար է կանգնեցվել (ճարտ.՝ Բ. Արզումանյան): Աղոթասրահում երկաթակուռ ջահ է կախվել (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան): 1962 թ. Մեսրոպ Մաշտոցի բազալտե գերեզմանաքարը փոխարինվել է օնիքսից պատրաստված տապանաքարով[13]:

Մեզ համար հասկանալի է այն տեսակետը, որ Վահան Ամատունին հանգուցյալին ամփոփել է խորանում, որն է առժամանակյա տուն, այնուհետեւ երեք ամիս հետո նույն տեղում կառուցել է սրբին արժանավայել տաճար: Հասկանալի է նաեւ, որ հիշատակված գրավոր աղբյուրները հիմնականում

11 **Թորոս Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հտ. I, Երեւան, 1942, էջ 41, 243, հտ. II, Երեւան, 1948, էջ 143:

12 Տե՛ս **Վարազդատ Հարությունյան**, Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, 1989, էջ 66:

13 Տե՛ս **Մ. Հասրաթյան**, Օշականի Սուրբ Մաշտոց եկեղեցին. «Մաշտոցյան ընթերցումներ, զեկուցման հիմնադրույթներ», Օշական, 2001, էջ 22-23. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 1065-1067:

չեն մանրամասնել եկեղեցու վերակառուցումների ժամանակը եւ գետնախարիսխի վրա կանգնած տաճարի ճարտարապետական հորինվածքը: Մեզ չեն հասել նաեւ «լայնանիստ, բարձրաբերձ», «տաշած, քանդակած քարերով տաճարի»[14] պատուհանների վերնասեմերի եւ այլ մասերի վրայի պատկերների, թեւավոր խաչքարերի գեթ փոքր բեկորներ[15]:

Ե. դարի տաճարի մասին այսօր վկայում են միայն զանգակատան հիմքում բացված գետնախարիսխները: Շինարարական թափոնը՝ մեծ քարերը եւ գետնախարիսխները, թաքցրել են ամուր սվաղի տակ՝ միեւնույն ժամանակ ապահովելով բարձր եւ սնամեջ կառույցի սեյսմիկ կայունությունը: Իսկ արեւելյան խորշի մեջ հայտնաբերված կափարիչով քարե տուփը, որը լցված է կենդանիների ոսկորներով, ենթակա է առանձին մեկնաբանության:

Մեսրոպ Մաշտոցի տաճար-վկայարանի գետնախարիսխների հայտնաբերումը հնագիտական կարեւորագույն հայտնագործություն է: Պեղումներով բացված սույն կառույցն իր ճարտարապետական հորինվածքով թվագրվում է Ե. դարով: Այն տաճարի արեւելյան հատվածն է, որտեղ եւ թաղված է Ս. Մեսրոպ Մաշտոցը:

Տաճարի ծավալատարածական եւ հատակագծային մանրամասները գտնելու, զանգակատան կառուցման ժամանակը ճշտելու համար հարկ է պեղումները ընդլայնել վերջինիս հիմքից դուրս՝ հյուսիս, հարավ հատվածներում:

---

14 Տե՛ս **Կորյուն**, նշվ. աշխ., էջ 51. **Առաքել Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ 276:

15 Վաղ միջնադարյան հոգեւոր կառույցների ճարտարապետական հորինվածքի մասին տե՛ս **Մ. Հասրաթյան**, Հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետություն, Երեւան, 2010. **Մ. Հասրաթյան**, Հայաստանի եւ հարեւան երկրների վաղ քրիստոնեական ճարտարապետական առնչություններ. «Աստվածաշնչական Հայաստան», Երեւան, 2005, էջ 649-652. **Սուրեն Մնացականյան**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երեւան, 1982. **Հակոբ Սիմոնյան**, Աղձքի արքայական դամբարանի հուշարձանախումբը (4-17-րդ դդ.). «Հուշարձան», տարեգիրք Է., էջ 4-42. **Վահագն Գրիգորյան**, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնազմբեթ փոքր հուշարձանները, Երեւան, 1982. **Լեւոն Ազարյան**, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երեւան, 1975. **Գրիգոր Գրիգորյան**, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երեւան, 2012: